ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail:
artashatmeria@artashat.am

N Ե-2665
<<30>>մայիսի 2024թ

<<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ -ի
Տնօրեն Ա. Խալաթյան
ՀՎՀՀ՝ 00155844,
գործունեության հասցե՝ Երևան, Դավթաշեն 8 փ. 19/1 փ.,
էլ.հասցե՝ engineeringllc@yandex.com,
հեռ.՝ +374 41 02 00 33

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<Արտաշատ համայնքի Վ.Արտաշատ բնակավայրի Բակունցի և Իսակովի փողոցների նորոգման, ասֆալտապատման, Արտաշատ քաղաքի Շահումյան /հատված/, Մարքսի փողոց-Ներսիսյան խաչմերուկի՝ ասֆալտապման, մայթի կառուցման սալարկումով, Մարքսի փողոց-Ներսիսյան խաչմերուկ հատվածը դեպի Քլամարի այգի հատված՝ սալարկում բազալտե քարերով /Старый город/, Մխչյան բնակավայրում ասֆալտապատում՝ մայթերի սալարկումով աշխատանքների կատարման նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայություններ>>-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի վերլուծության արդյունքում պարզվել է, *հետևյալը* /հիմք՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության 29 մայիսի 2024թ. թիվ Ե/1287-24 գրություն/. Տեղեկագրում հրապարակված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/49 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ /ՀՎՀՀ՝ 00155844/ /այսուհետև՝ Ընկերություն/-ն՝ համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2016 թվականի հուլիսի 8-ից Ընկերության տնօրեն է հանդիսանում Արման Հայրապետի Խալաթյանը:

Պարզվել է նաև, որ **<<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00229138/ 2022թվականի հունիսի 22-ից մինչև 2024թվականի հունվարի 22-ը** /17.12.2022թ.-11.05.2023թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/32833/02/22 որոշման հիման վրա/ ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Ուշագրավ է այն, որ Ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանի և <<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ինկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանը 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օրս հանդիսանում է նաև <<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ի տնօրեն և բաժնետեր:**

<<Գնումների մասին>> օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում...**

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի /այսուհետև՝ Կարգ/ 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ **ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված**, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. Տվյալ իրավաբանական անձի բաժնեմասերի տասը տեկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. Տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, <u>գործադիր տնօրեն</u>, նրա տեղեկալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգալ մարմնի նախագահ, անդամ,

դ. Իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Ընդ որում կարգի 121-րդ կետի համաձայն՝ **<u>մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելու, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:</u>**

Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ **Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:**

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 29 մայիսի 2024թ. թիվ Ե/1287-24 գրությունը, Արտաշատի համայնքապետարանի և <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 24-ին կնքված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/49 ծածկագրով պայմանագրի 7,3 կետը /Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ***<u>ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը</u>***

չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքե
ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթ
արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքո
գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմ
կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրո
պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կա
բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքո
սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որ
մասով պայմանագիրը լուծվել է /Արտաշատի համայնքապետարանի և <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ-
միջև 2024 թվականի մայիսի 24-ին կնքված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/49 ծածկագրով պայմանագիր
միակողմանի ամբողջությամբ լուծել 2024թ մայիսի 30-ին:

1. Առաջարկել՝ <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ կազմակերպությանը 10 /տասը/ օրացուցային օրվ
ընթացքում վճարել պայմանագրի ապահովման 177 096 /մեկ հարյուր յոթանասունյոթ հազա
ինսունվեց/ ՀՀ դրամ և պայմանագրի որակավորման ապահովման 265 644 /երկու հարյո
վաթսունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ գումարները, որպեսզի գնումներ
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկվի: Հակառա
դեպքում պատվիրատուի ղեկավարը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավուն
չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի Լիազո
մարմնին, իսկ <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացվա
պայմանագրի ապահովման և պայմանագրի որակավորման ապահովման ապահովումներ
սահմանված կարգով կներկայացնի ՀԱՅԷԿՈՆՈՄ ԲԱՆԿ ԲԲԸ՝ վերոնշյալ գումարները գանձելու
Արտաշատի համայնքապետարանի ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխա
հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Արտաշատ համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

Կատարող՝ աշխատակազմի գնումների բաժնի
Պետի պարտակ. կատարող Զ.Ղազարյան
հեռ.՝ 093 60 34 02